

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ծր.

Վեցամսեայ 6 ծր.

ԱՐՏԱՍԱՀԱՆԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով
Տարեկան . . . 14 ծր


Վեցամսեայ . . . 7 ծր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօյաւ
Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցումն ողբ
20 սանթիմ



Լ Ի Ս Տ Ա Ն Ի

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Գ Ա Վ Ա Գ Ա Կ Ա Ն

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐ ԲԵՆԻՔՏԻՆԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Net. Par G. Aeloukarian Michanits
Langsac No 4
Vienne

ՀԱՍՏԵ

Publication du journal

Le vendredi

VAUNA (— d'—)

Редация

на ВѢСТНИКЪ

Исаевъ

ВАРНА

Գրութեանը եւս չի
տրոշիր

ԹԵ ԻՆՉՈՒ ՉՈՒՆԵՑԱՆԵ

Գ.

Մեր նախընթաց երկու յօդուածներով բացատրեցինք թէ տաճկահայոց ծանր աղետներու ենթարկուելու պատասխանատուութեան անհղ բաժինը կիյնայ կարգ մը ռուսահայ յեղափոխիչներու վրայ, և զանոնք այդ պատասխանատուութենէն զերծ ցոյց տալու համար վարդօներու և այլնի ջանքերը ու ծակ տրամաբանութիւնները իրողութեան գրեթէ և ճշմարտութեան ուրացում են միայն:

Սակայն մեր նպատակը չէ հոս կրկին ծանրանալ պատասխանատուութիւններու վրայ անցեալին համար, այլ մեր նպատակըն է այս կամ այն միջոցներով ստեղծուած մեր ներկայ անհանդուրժելի վիճակը հոս պարզել և անոր գաղմախութիւնը վրայ մտածելու համար ազգին ուշադրութիւնը հրաւիրել:

Այսօր տաճկահայաստանէ անդին ռուսահայաստանի մէջ ալ ստեղծուած է հայահալած գրուածութիւն մը որ կը սպառնայ մեր ազգի ամէն գաղափարներուն, հարուստին և աղքատին, գործաւորին և գործարանատէրին, գեղջուկին և քաղքենիին, յեղափոխականին և պահպանողականին՝ գրութիւնը ծանր է և ճրգնաժամային, զոր երբեք ունեցած ըլլայ հայ ազգը դարերու ընթացքին մէջ. վերահաս կոտորածներու երկիւղը հաւասարապէս կը տիրէ թէ թուրքիոյ թէ Ռուսիոյ և թէ Պարսկաստանի մէջ. իսկամ մտեւանդութիւնը չլծալազերծ եղած համիւլամութեան և համալաւութեան երազներովը տոգորւող կառավարութեանց թոյլտուութեամբ, կը սպառնայ հայ տարրի գոյութեան: Ստացուած նամակները ու հեռագիրները գուժաբեր են և ընդհանուր կերպով հայահալած գրութեան մը գործադրութեան մանրամասնութիւնները կը հաղորդեն:

Ազգին այժմու վիճակը կանխատեսուածէն շատ աւելի ծանր է և անմիջական գարմանի կարօտ: Պէտք է և անհրաժեշտ է որ ազգովին լրջօրէն այդ գարմանին վրայ խորհինք:

«Լ. Ամէնի» և ուրիշ մէկ քանի հայ անկախ թերթեր Բարիկի մէջ ազգային համաժողով մը գումարելու առաջարկը բրած էին, այդ ժողովին մէջ ազգին վիճակը քննելու և անոր գոյութեան սպառնացող վտանգին դէմ կարելի եղած միջոցները խորհելու և ըստ այնմ ազգովին հետեւելիք ճամբան գծելու համար: Մենք արդէն այդ առաջարկը շատ բանաւոր գտած ենք, նկատելով, մէկ կողմէ մեծ վտանգին հանդէպ, մեր ազգային արդէն փոքր ուժերու զիրար շլատող անհասկացողութիւնը և վատ գործածութիւնը, իսկ միւս կողմէ ազգին անհաղին զանգուածներուն չէզոք անուսին տակ անտարբեր ձեռնադրութիւնը:

Այո՛ վտանգը ընդհանուր է և անտարբերները ու չէզոքները անկէ զերծ չեն: Հետեւաբար հայ ազգին ամէն գաղափարներուն երկայացուցիչները—յեղափոխական թէ ոչ—պէտք է և առանց յապաղման ի մի գումարուին: Բարիկ կամ այլուր: Այս առթիւ Տ. Մինաս Չէրազ հետեւեալ տողերը կը գրէ:

«Ստիպողականութիւն կայ Գործելակերպի և նոյնպէս քաղաքականութեան փոփոխութեան մը հարկը կը ներկայանայ Հայերուն, վասնզի քաղաքականութեան օրէնքները անփոփոխ չեն գիտութեանց ճշգրիտ օրէնքներուն պէս թըրքահայաստանի մէջ յարձակում մը կրնար Ռուսահայաստանի և Պարսկահայաստանի մէջ յարձակում մը յառաջ բերել: Եւ պէտք չէ ուշադրութենէ վրիպել չնայ այն բանը թէ ռուսահայաստանի խաղաղութեան կիքումը պիտի թոյլատրէ Խաղախները արեւան մէջ խեղդելու Ռուսահայերու իշխանութեան հպատակ ցեղերու բոլոր շարժումը:

«Կոտորած և Գաղթում. ահաւասիկ երկու չարիք որոնք կը սպառնան այսօր նոյն իսկ Հայաստանի և Հայերու գոյութեան: Այս կրկնակ վտանգը գիւղաբնակչութեան համար, պէտք է համաձայնի մէկ ընդհանուր ծրագրի վրայ և նոյնօրինակ միջոցներ ձեռք առնել, իմաստութիւն չգիտի ըլլար մամուլ մէջ վիճաբանութեան գնել այդ ծրագրիները և այդ միջոցները: Միայն համահայկական համաժողով մը կրնար անոնցմով զբաղիլ օգտակարապէս, և մենք մեզ պարտականութիւն կը համարենք պնդել այն առեակ խորհրդակցութեան մը ստիպողական կարեւորութեանը վրայ»:

Տ. Չէրազ այս խիստ կարեւոր առաջարկի մասին Դրօշակեան և Հնչակեան թերթերու լուծիւն պահել իշխիւն յետոյ, յայտնէ թէ Դրօշակեան կուսակցութիւնը նախաձեռնութիւնը ստանձնէ գումարելու այդ համաժողովը որուն պէտք է հրաւիրեն չէզոք հայեր ալ որոնց կործինք իմանալ օգտակար պիտի ըլլայ: Բայց մենք թերահաւատ ենք Տ. Չէրազի յայտնած այն յոյսի մասին թէ Դրօշակեան կուսակցութիւնը նախաձեռնութիւն ստանձնէ համաժողովը գումարելու, որովհետեւ այդ կուսակցութեան բերանը համարուող «Իրօ Արմէնիա» թերթին վերջին խմբագրականը՝ զոր մեր ներկայ թիւով կը թարգմանենք, հակառակ համոզում մը կուտայ մեզ: Արդ և ուրիշ պատճառներով կը կարծենք թէ Դրօշակեանները իրենց ծանօթ կուսակցութեան թիւում և եսասիրութեամբ ուղղակի կամ անուղղակի միջոցներով պիտի հակառակին համազգային համաժողովի մը գումարման և իրենք պիտի շարունակեն իրենց յախուռն ու կործնողական գործելակերպը:

«Փորձալը կրկին փորձիլ յիւմարութիւն է» կըսէ առաժը: Իցիւ թէ սխալ ըլլար մեր այս կարծիքը:

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԵՐԸ

ԵՒ
ՓՈԽԱՐԱՅՈՒՄ Վ. ՏԱՇԲԱԶԸ

Կովկասի մէջ օրէ օր աճող անապահովութիւններուն և խռովութիւններուն պատճառով հայ ժողովուրդին կողմէ ազգու զինում մը եղաւ փոխարքայ կոմս Վարդանգով-Տաշքովին, կայսրութիւնը քարոզելու համար: Մշակ ի տնօրէն Տ. Վարդանգովի տաղանդով թեմար տասնեակնոց անձերէ բաղկացեալ պատգամաւորութիւն մը յունիս մէկին ներկայացաւ փոխարքային ի Տփլիս, և անոր յանձնեց յիշատակագիր մը որուն պարտականութեան համաձայնութիւնը է:

«Մուսա» կովկաս հաստատուելէն ի վեր հոն ներմուծուած բարենորոգումներու և քաղաքակրթութեան աշխատութեան մէջ Հայերը իրենց մասնակցութիւնը ունեցան:

Անոնք ծանրապէս իրենց աշխատութեամբ զբաղած կը հաւատային թէ գոյութիւն ունեցող օրէնքները բաւականաչափ պիտի պաշտպանէին իրենց քաղաքական պատուութիւնը և ազգային զարգացումը: Բայց քիչ յետոյ անոնք ենթարկուեցան կամայական վարչութեան մը և ճիշտ չիլ քաղաքականութեան մը: Բարձրէն յայտնապէս ջանք կը թափուէր զանոնք կատարելապէս որոտացնելու, ջնջելով քիչ քիչ անոնց բոլոր ազգային իրաւունքները:

Այս նպատակաւ արգիւտեցաւ Հայ գիւղացիներուն ազատ հոգեւոր վրայ հաստատուել, բոլոր հայ վարժարանները և հանրութեան օգտակար ընկերութիւնները գոցուեցան և արգիւտեցան, մամուլը տրոջութեան գաղափարաւեցաւ, ազգային գոյքերը գրաւուեցան:

Հայերու գէժ այս սխալմամբ հալածանքը նոյն իսկ պաշտօնական թերթին տիւնակներուն մէջ մուտ դաւա ձգակով հայոց գէժ գրգռել կովկասի միւս ժողովուրդները: Վերջապէս վեց ամիսներէ ի վեր այդ վարչական հալածանքին յաջորդեցին կոտորածը և կողոպտումը հայոց, ստանք կամ մուրացկանութեան կամ դաղթումի հարկադրելով: Հայոց համար կեանքի ինքնայն անապահովութիւնը օր ըստ օրէ կաւեցայ: Կոտորածներուն հեղինակները կամ հովանաւորողները կրեալ թէ սա գաղափարով շարժած են թէ իրենց այդ ընթացքը բարձրէն հաւանած է և թէ Հայոց ջարդերը կը համապատասխանեն կառավարութեան գիտաւորութեան: Մը-

տածման այս ձևը արդարացում կը գտնէ այնու որ ամէն կողմ տեղական կառավարութիւնները բացարձակ կերպով թերացան հայերը պաշտպանելու իրենց պարտականութեան մէջ :

Այս պայմաններու մէջ խիստ ըստիպողական է որ,

1. Ռոտմութեան հեղինակները խըստիւ հետապնդուին եւ պատժուին, որպէսզի ոճրագործները համոզուին թէ իրենց ոճիրները անպատիժ չը պիտի մնան :

2. Կողպուած ինչքերը իրենց տէրերուն վերադարձուին :

3. Կառավարութեան կամ ոստիկանութեան պաշտօնեաներէն որոնք որ չեն փութացած խոտմութիւնները զսպել պատժուին :

4. Նոյնանման զէպերու կրկնումին առջեւ առնելու համար հայ գիւղացիները արտօնուին պահակազօրի (միլիս) կազմակերպութիւն ընել, կառավարութեան հսկողութեան տակ եւ զէնք կրել :

Վերեւ թուուած միջոցները անմիջական պէտք մը ըլլալով, միայն կարապետներն են Կովկասի մէջ գործադրելի ուրիշ կարգ մը բարեկարգութեանց . բայց անոնց վրայ խորհրդակցելէ առաջ հարկ է որ Հայոց կեանքի եւ ինչքի ապահովութիւն հաստատուի :

Այս յիշատակագրին պարունակութեան տեղեկանալով, փոխարքան հայ պատուիրակներուն մասնաւոր բացատրութիւնները լսեց եւ յետոյ անոնց պատասխանեց .

1. Թէ ազատ հողերու վրայ հայ գիւղացիներու հաստատման դէմ բաւարոյցուած արգելքի մասին պէտք եղածը պիտի ընէ որպէսզի այդ կէտին գոհացնէ զանոնք :

2. Թէ վարժարանաց գոցուելուն եւ հայ ընկերութեանց լուծուելուն խնդիրը պիտի քննուի, եւ ինք կը խորհի թէ ամէն կողմէ պիտի զընահատուի ըլլալիք կարգադրութիւնը :

3. Թէ ինք անձնապէս չուզեր ոչ մէկ սեղմում ընել կարծիքի ազատութեան մասին մամուլի եւ հաւատարմութեան մէջ, եւ թէ այս խնդիրը կարգադրուելու ճամբուն մէջ է ի Բեքերսպուրկ :

4. Թէ կը խոստանայ վերակազմել Պաքուի ոստիկանութիւնը եւ վերագործնել Հայոց գոյքերը երբ կը հաստատուի թէ անոնց կը պատկանին :

Յետոյ փոխարքան կանգ առաւ յիշատակագրի սա մասին վրայ ուր ակնարկութիւն եղած էր հայոց «սօստէմաթիք հայաձանք»ի եւ ոռու կառավարութեան պատասխանատուութեան մասին Կովկասի խոտմութեանց մէջ, նա բողոքեց թէ կառավարութիւնը մաս չունի Հայոց կողպատուելուն եւ կոտորածներուն մէջ եւ աւելցուց «թէ ինք ալ իր կողմէ կը դիմէ պատուիրակներուն, խնդրելով որ բարեհաճի հարկ եղածը ընել յեղափոխական յանձնախումբներուն մօտ որ անոնք զաղբիւրներն իրենց ահաբեկչական (թէ էտոյթ) գործունէութիւնը» վերջին զէպերու բոլոր պատասխանատուութիւնը այս կերպով յեղափոխականաց վրայ անոր բեռնելը տեղի տուաւ որ հայ պատուիրակները ազդու կերպով բողոքեն պատասխանելով որ իրենք թէեւ ոչ մէկ ծանօթութիւն չունին յեղափոխական գործին վրայ սակայն կրնան հաստատել թէ այն հետեւանքն է միայն Հայոց դէմ եւ

զած պայծառքին եւ կոտորածներուն, թէ կառավարութիւնը անհոգ գտնուածէ, եւ թէ այդ գործը անմիջապէս կանխատանայ ինքնին երբ անհետանան անոր ծնունդ տուող պատճառները :

Փոխարքային յայտարարութիւններուն ամփոփումէն կը հասկցուի թէ ինք կը մերժէ ամէն կէտի մէջ Հայերը հայաձանք եւ ոռու սացնելու քաղաքականութիւնը իր նախորդներէն սկսած : Սակայն կը պատշաճի որ, իր խոստումներուն հաւատք ընծայի, եւ սպասել որ փոխարքան ցոյց տայ իր անկեղծութիւնը յայտարարութիւններէ տարբեր կերպով, եւ որ մանաւանդ կը հերքէ իր ընթացքով սա տարօրինակ իրողութիւնը թէ ճիշդ իր կովկաս հասնելէն ի վեր վիճակը ծանրացած է եւ թէ այնպիսի բարբարոսական տեսարաններ պարզուեցան որոնք միայն Համիտական կոտորածները կը յիշեցնեն :

(Գ. ԷՕՌՕԲԷԷՆ)

ՀԱՅ ԿԱԿԱՆ ԴԱՏԱ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԱՇԽԱՐՀԻ ԱՌՋԵԻ

(Շարունակելի, Նախորդ թիւէն)

Հայ ազգն ալ իր «Մեխան» ըրած է զեւրոպայ, եւ վարկենէ վայրկեան կը սպասէ անոր երեւնալուն, երբ Հայաստան պիտի ազատի : Այս ակնկալութիւնը անբանաւոր եւ արտաոց, շատ թուլացուցիչ է մեր ազգային ճիշդին, բայց Դաշնակցական պարունակներուն չըջանին մէջ է որ իր ամենէն ողբալի արդիւնքները ցոյց կուտայ : Եւ այդ է պատճառը որ ստիպուած ենք անդադար անոնց վերադառնալ : Ազգը շատ աւելի ուժաւորուէ անոնց դէմ պիտի ելլէր եթէ ամբողջովին վարակուած չըլլար հզօր օտարներու օգնութեան շնորհիւ ազատութիւնը իրեն պարգեւ տաւալու մոլորանքէն, այն է, կարծ խօսքով, օտարապատանութեան եւ բաղդապաշտութեան արտէն : Դաշնակցիւնները եւ համակրական հրատարակութիւնները եւրոպական մամուլին մէջ զարգացուցին մեր այս ակառու սպառնալից վատթարացումը մը որ հասուցին զայն : Ախտը այնքան խորապէս վարակած է Դաշնակցականները որ ամբողջ գաւառներ ողջակիզ կը մատուցանեն հրաշալիորձ Բաղդին կամ յապաղող Մեքային :

Կ'ըսեն, որ անհաւատալի չէ, թէ Դաշնակցականներուն մէջ ուսեալ անհաստիք կը գտնուին, եւ մի քանի ներքալիւրացոյն զատաբարակութիւն առած : Յուսելի երեւոյթը մեր ժողովրդին յատուկ չէ, եւրոպական ազգաց մէջ ալ կան ուսումնական խաւարամիտներ : Մենք պիտի ակնկալէինք ընկալանքէն որ ուսեալ Դաշնակցականներն անդադար քարոզութեամբ պայքար մղէին մեր հայ ժողովուրդին բաղդապաշտ միտումներուն դէմ եւ ջանային արմատախիլ ընել անոր մտքէն արտաքին զօրութեան միջնորդութեամբ յանկարծ փրկուելու մոլոր ու վտանգաւոր հաւատքը : Սակայն, ընդհակառակը, անոնք սկիզբէն ի վեր այդ մոլորութիւնը աւելի խորապէս աստատելու օտարած են իրենց

զանազան խորումներով, որոնց ամենն ալ օտարին օգնութիւնը իրենց ուզած ատենը բռնադատելու տղայական ճիգեր եղած են :

Այս մոլորանքին երեսն է որ ազգը այսօր կը տառապի սպառնալից տկարութեան մը մէջ խորասոյգ : Ասիկա հասկնալ անհրաժեշտ է մեր մեծերուն ու պզտիկներուն : Ու պէտք է այսքան փորձառութիւնէ վերջ պատրաստուած ըլլայինք մեր այս քաղաքական մոլորանքէն բուժուելու : Հաւանական չէ որ այսօր գտնուի ազգին մէջ անհատ մը՝ հասարակ իմացականութեան տէր՝ որ կարող չըլլայ սա տրամաբանութեան անխղիւր հետեւականութիւնը տեսնել-այսինքն թէ (1) Դաշնակցիւնները եւ հայասիրական կարգ մը հրատարակութիւնները չափազանց յոյս ներշնչեցին մեր ժողովուրդին թէ եւրոպայ բարեկարգ վարչութեամբ կամ նոյն իսկ ինքնօրինութեամբ պիտի օժտէր զՀայաստան (2) այս յոյսը պաշտօն եղաւ որ, զեւրոպայ մեր կողմ հաշուելով, մենք սկսանք անհամբեր դիմք մը առնել հանդէպ թուրք Կառավարութեան եւ մենք ու մանք յեղափոխական շարժումներ ստեղծելու չափ յառաջ գնացին, հետեւապէս (3) Թուրք Կառավարութիւնը հակահայկական քաղաքականութիւն մը ծրագրեց ու զմեզ ապստամբութեան բոլորովին անկարող վիճակի մը մէջ ձգելու համար սկսաւ հալածել ու ճմլել զմեզ : Ասկէ բացարձակ յայտնի է, եւ կարծեմ ոչ ոք կրնայ անկեղծօրէն երկքայիլ թէ Սասունի 1894 թ ջարդը, 1895-96 թ ընդհանուր կոտորածները, 1904 թ Սասնոյ երկրորդ ջարդը տեղի պիտի չունենային եթէ Հայերս Եւրոպայի պաշտպանութեան վրայ այնքան յոյս դնելով՝ յանկարծական բարեբաղդութեան մը հետապնդած չըլլայինք ընդ իսկ :

Այս ազգային փորձառութեան լուսով կը տեսնենք ամենքս ալ թէ ո՞րքան միակողմանի կամ մեղի հաճելի մեկնութիւններ տուած ենք պատմական կարգ մը իրողութիւններու ու այսպէս սնուցած մեր մոլորանքը : Օրինակ իմն, յեղափոխական երգ մը կ'ըսէ :

«Օրինակ առնենք Պուլկարի աղզէն Մենք ալ կազատինք վատ թուրքի ձեռքէն» :

Իրաւ թէ Պուլկարիոյ պատմութեան մէջ հինգ զէպեր իրարու յաջորդած կը գտնենք. ընդմիջում, կոտորած, եւրոպական կարծեաց յազում, ոռուական միջամտութիւն, եւ պուլկարական ազատութիւն : Գիտենք սակայն, եւ հաւատեալ գիտենք, թէ Պուլկարիա ազատեցաւ ոչ չնորհիւ, ընդմիջման եւ կոտորածին, ոչ վասնզի կառավարութեան բարբարոսութիւնները հրաշունչ պերճախօսութեամբ զատապարտեց—զի հայոց կոտորածը շատ աւելի սարսափելի էին, եւ Եւրոպայի աւելի քան միանգամ զատապարտեց զանոնք, եւ գրեթէ ամբողջ մարդկային սեռը ցասամբ բողոքեց, սակայն եւ այնպէս փրկուեց միջամտութիւն տեսնելու բացարձակ պայմաններու չընդմիջում, այսինքն Ռուսիոյ պատեւրազ մեղով ու յաղթելով թուրքիոյ : Նաեւ գիտենք թէ Ռուսիա այդ անապին պատերազմը մղեց ո՛չ ըզ Պուլկարները ազատելու նպատակաւ, այլ զՊուլկարիա իրեն իրեն ուժին նոր ու նպատաւոր յինակէտ գործածելով զԿ. Պոլիս առնելու համար :

Այս պատմական նշանակիչ զէպեր մին է շատերէն որ կ'օգնեն մեզ ըմբռնել թէ Դաշն քրիստոնեայ հրապարակաւ մանր խնդիրները որքան խստիւ կապուած ու ստորակարգուած են մեծ խնդրոյն, մայր խնդրոյն, այսինքն Արեւելեանին : Արեւելեան խնդրը հիւսիսէն Ռուսիոյ, հարաւէն՝ Միջերկրականին, արեւելքէն՝ Փոքր Ասիոյ, արեւմուտքէն՝ Պալքանիան թերակղզոյն հետ կ'ընկնուի պաշտպանութիւնները ներկայացնող ամենազգուար խնդրը մէ, իր կորիզն ու էական կէտը ըլլալով Կ. Պոլիսը : Այս հին ու զարմանալի մայրաքաղաքը բովանդակ կրկրազնդին վրայ եղական է իր անբաղդատելի աշխարհաբարկան դիրքին շնորհիւ, եւ «Արեւելեան խնդիրը» նպատակաւ խնդրին է թէ ո՛ր Տէրութեան ձեռքը պիտի անցնի այդ ամենաանխառնակ զիրքը, աշխարհի կեդրոնը : Երբ ու է մեծ ու հզօր Տէրութիւն ստանայ զԿ. Պոլիս, ճակատագրուած պիտի ըլլայ անտեսական գերակայութեան եւ գերակրօն քաղաքական ազդեցութեան : (Շարունակելի)

ԱՐԻՒՆԻ ՄԷՋ

Հայկական աղբիւրէ հասած հեռագիրներ, զրաքննութեան բովէն անցած ոռուական լրագրերու տեղեկութիւններ, Ֆրանսական ու անգլիական թղթակցութիւններ, վերջապէս ամէն շարաքուք լուր որ Կովկասէն կուգայ, միեւնոյն ողբերգութիւնը կը պատմեն . այն է քաղաքներէն մինչեւ գիւղերը, թրքական եւ պարսկական սահմանագիւղներէն մինչեւ թիֆլիս եւ Պաքու, հայ արեւելք կը հոսի, թէեւ այս անգամ Պալքանի Սուլթանը չէ որ մահմետական մոլեռանգութիւնը կը զրգռէ, այլ Սուրեն Ռուսիոյ ուղղափառ ջարդ : Անունները փոխուած բայց գործելու եղանակները նոյն են, եւ մինչեւ Նախիջեւանի սպանդը (վաճառատունները գոցուած, յետոյ թախար քաղաքապետն եւ ոռու կառավարութեան խաբուելով հայերու կողմէն բացուած) չկայ բան մը որ կէտ առ կէտ չ'իջեցնէ 1894 եւ 1896 թրքական կոտորածներու զրուակները :

Ճակատագրի մէկ անողորմ հեղաշուժով, հայկական սպանութիւնները այնպիսի պահու մը կը կատարուին, երբ աշխարհ համօրէն տագնապի մէջ, եւ Եւրոպայի հանրային ուշադրութիւնը մեծաւ մասամբ գրաւած են ուրիշ խնդիրներ ինչպէս երկի Ֆրանսո-Անգլո-Գերման պատերազմի սպանալիքը, այսօր Օտտոման տաւմը, որ թերեւս ջարդը մը ապաւորող ծայրայեղ խոտմութեան մը աւետաւորը պիտի ըլլայ : Եւ սակայն ներկայ զէպերէն աւելի հեռուն տեսնողներուն համար, Հայոց ճակատագիրը նաեւ կապ ունի մէկ կողմէ Ռուսիոյ մէջ պատահանքներուն եւ միւս կողմէ Եւմէնի եւ Ասիոյ զէպերուն հետ :

Ինչ որ ալ ըլլայ Ռուսիոյ ապագայ վարչական զրեւթիւնը, կեղծոնացում կամ զաշնակցութիւն կէս ինքնավար ազդերու, ինքնակալութեան վերջը եկած ըլլալը բացօրոյ կերեւայ այսօր : Մինչեւ այժմ ոռու ժողովուրդին դէմ, Հայերուն դէմ, Բալքանցիներուն, վրա-

ցինքուն, Թինլանտացիներուն զէմ, գործադուր ընող գործաւորներուն, մտաւորականներուն, ուսանողներուն եւ զպրոցական տղայոց զէմ ձարական կառավարութիւնը կրնար սպառնալ նկատել ինքզինք թանկին եւ ծովային զօրութեան հաւատարմութեանը կռիւնով: Պարտութիւններէն յետոյ «Բնիակ Բօթէմբին» ի նաւապետները օրինակ մը տուին որ իր հետեւորդները պիտի ունենայ: Արդէն Քրօնշթաւեր եւ Լիպաուի մէջ ապրտամբութիւններ պատահեցան Անգլիա-տարօր եղածին նման: Սամաուայի մէջ ցամաքային բանակն ալ իր կարգին կրնող լին: Լոցի մէջ զինւորները խաղախներուն վրայ կրակ բրին, եւ ալ աւելի նշանակալից զէպն ախ է թէ սպաննուողներու մասը զօրքիրը կը գրգռէ ինքնակալութեան զէմ:

Ռուսիոյ հարստահարեալները զէնք չունէին, անոնք խաղախներուն շատ գիւրդին ջարդուելիք մարդկային օրսեր կը ներկայանային բայց մօտ ապագայի մը մէջ անոնք պիտի պաշտպանուին զինուորներէն որոնք քիչ առաջ ապահով նեցուկը եղած էին ինքնակալութեան: «Բնիակ Բօթէմբին» ի նաւապետներ եւ Լոցի զինւորները անգամ մը բերին զինուորական ուժը նեցուկ ընելու յեղափոխութեան: Գրաքննութիւն մը չը կայ որ կարենայ արգելիլ այս պատմական նորօրինակ երկուսի միջեւ ծաւալուած ամբողջ ոտուոր մէջ: Որոնք որ տակաւին հաւատարիմ կը մնան տիրող դրութեան, էն խաւարած մուծիկները իսկ, զայն պիտի իմանան եւ յանկարծական լոյս մը պիտի ծագի անոնց խաւար հոգիներուն մէջ: Եւ վերջապէս պիտի հասնան միծնցութիւնը եւ գեղեցկութիւնը զէպներուն որոնց համախառն տես կրկնան եւ պիտի զարդին իրենց ծովութեամբ, յապաղեցէ հողջուններու նոր աշխարհի յաղթանակը որ կը ծնի արեւնի եւ վիշտի մէջ:

Կովկասի Հայերը պիտի կրնան աշխատակցիլ ազատութեան ընդհանուր գործին, այն ամէն տեղեր ուր որ խիստ փոքրամասնութիւն չեն կազմեր որոնք են ինքնապաշտպան ըլլալ ամէն միջոցներով եւ այսպէս իրենց միջակ կարողութեան չափով, որ ըստ պատճառ ու խորտակուած է այնչափ յաջողական տրիւնանդութիւններէ, անոնք ալ կ'օգնեն վարչական գրութեան անկուսին: Բայց անոնց զիմարդութիւնը բնաջնջման զէմ պիտի կրնայ տեսլ մինչեւ ազատութեան օրը: Հոս է օրուան մտահոգութիւնը: Կալիցիներու, Նաբալիցներու եւ Վարանցով-Տաշքովներու գարշիլի միջոցով պիտի յաղթանակէ նախ քան որ յեղափոխութիւնը տիրէ եւ ալէ Զարիզմը:

(Նարուանկելի) Բ. Դ. Գ. Բ. Բ.

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Թիւրքի տգէ. վարժարանի հոգաբարձութիւնն պարտք կը համարի հրապարակաւ իր խորին շնորհակալութիւնը յայտնել Տիար եւ Տիկին Դէորդ Աստարճեանի որ վարժարանի տարեկան հանդէսին առթիւ իրենց փոխ տուած դաշնակը բարեհաճեցան ազնուօրէն նուիրել ազգ. վարժարանին:

Ի գիմաց հոգաբարձութեան Ատենադպիր Ատենապետ Մ. ԹԵՐԶԵԱՆ ՀԻՆՏԵԱՆ

28 յունիս 1915
Թիւրքի

ԿՐԹԱԿԱՆ

Գիտակցութիւնը որ իւր աստիճանական զարթոնումով մեծ յեղաշրջում յառաջ բերած է մարդ անհատին մէջ, անհրկրայն ենք թէ միեւնոյնը յառաջ կրնայ բերել ամբողջ մարդկութեան գոնէ յաղաթողութիւն մէջ ալ: Եւ յայտնի է ինքն իր ջրնը բաղկացած է մարդ անհատներէ: Եւ ինքն ամբողջ մարդկութիւնը նկատենք երկու իրարու հակառակ զանգուածներու ամբողջութիւն մը:—մին գիտակցութեանը, իսկ միւսը՝ անգիտակցութեանը: Եւ անոնք որ գիտակցութիւնը իր մասնակցականութեան մէջ կը զսնուի եւ շատ ալ տկար է անգիտակցութեան հետ բաղդասելով: Բայց այս տկարութիւնը կենթադրէ՞ որ անգիտակցութիւնը կրնայ տեսական ըլլալ իր գերին մէջ:—Երբէ՞ք: Ուրիշն գիտակցութիւնը, իրեն զարգանալու ընդունակ վիճակ մը, եւ իր զարգացումը իրեն զարգացութեան յաջորդ սերունդներուն ուղին լուսաւորելու կոչուած ջանք մը անխուսափելի իրատեսք ունի անհուր եւ իր պատմական գերը խաղալու մարդկային կեանքին մէջ:

Ապագան, ըլլալով ներկայի հարազատ ծնունդը, իր սպաննութեան համար շատ բան կը սպասէ հերկայէն: Ուստի, որպէս զի կարելի ըլլայ ապագան գիտակցութեամբ օժտել հարկ է որ արդի մանուկ գիտակցութիւնը զարգանայ: Իր զարգացումը, վանէ տիրող խաւարը, խորտակէ նախապաշարմամբը պատնէշները եւ գրաւէ իր արժանաւոր տեղը: Իսկ այս պատմական համար ալ կարեւոր է որ մարդիկ գիտնան ըզգացումներուն անմիջապէս քովիկը տեղաւորել բանականութեան ձայնը եւ զանոնք հաշտեցնել իրարու հետ, որպէսզի այդպէսով ստեղծուի անհրաժեշտ համարուած կարելիութիւնը՝ հասնելու համար այն յաջողութեան զոր գիտակցութեան մէջ խառնուած կը տեսնենք: Խառնուածքներու պէսպիսութեան յառաջ գալիք խոշոր կարելի է դնել չէզոքացեալ այնպիսի վիճակի մը մէջ, ուր ի գործ դրուած ջանքերու արդիւնքը բացասական բնաւորութիւն ստանալէ զերծ կրնայ մնալ:

Գաղափարիկը աշխարհի ի գործ դրած ջանքերը, ինքն զարու վերջին կէտէն սկսեալ անհախճաբեղած են ի մասին մանուկներու կրթութեան գործին: Կատաճա՞ր—Որովհետեւ ներկայ մատաղ սերունդը մարդկութեան ապագայ վարչութիւնը կը նկատուի, ուստի եւ իր արդի պահանջը՝ կզգացուի մատաղ սերունդին ներշնչելու այնպիսի ոգի մը որ համապատասխանող ըլլայ գիտակցութեան ձգտումներուն եւ գոհացողը մարդկութեան իսկական պահանջներուն, բայց որովհետեւ այդ ոգին ներշնչելու ատակ կրնան համարել միայն ծնողքները եւ վարժապետները, ուրիշ խօսքով՝ ընտանեկան եւ զպրոցական միջավայրերը: Ուստի պէտք է որ այս երկուքը ձեռք ձեռքի տան պատրաստելու համար գիտակցութեանը:

Տեսնենք թէ այս երկուքէն իրար քանակելը ո՞ր աստիճանի յաջողութեամբ կը կատարէ այդ մասին իր վրայ ինկած պարտականութիւնը: Մեր ծնողքները չեն կրնար վերել պահանջուած ոգին ներշնչել իրենց զաւակներուն, քանի որ իրենք տա-

կաին պէտք ունին լուսաւորութեան: Եւ ամէն սխալ գործուած ծնողքի մը կողմէն, չպիտի ցաւ պատճառէր այնչափ, որչափ պիտի պատճառէր ինքն իրեն ուսուցիչի մը կողմէ գործուածը: Իրականութեան մէջ ընտանիք թէ վարժարան՝ հակասելով վրայ են իրենց խօսքի իր գործին: Եւ անկէ զատ ինչ որ կը չինէ մտտուիլն մէջ վարժարանը՝ տանը մէջ կը քանդուի: Ընդհակառակը, պէտք է որ, մէկը միւսին ձգած պակասին լրացուցիչ ըլլար:

Այսպէսով շատ ուսուցիչներ ու ծնողքներ իրենց աշակերտներուն կամ զաւակներուն կարգիլն գործածութիւնը ա՛յն լուրի եւ միեւնոյն կար ըմպելիքներու, ասացումքներու եւ յաճախ ազատ վերաբերման միջոցով կը անհնէ թէ ծնողքին եւ թէ ուսուցիչին վրայ:

Տղան ինչ որ տեսնէ իր մեծերէն անմիջապէս էնդօքսինակէ. ասի փորձուած անվիճելի ճշմարտութիւն մըն է: Ինչ կը նշանակէ, օրինաւ, կի համար, սիկառ մը չինել, աշակերտէն կրակ մը ուզել եւ միանգամայն տղուն պատուիրել որ ծխախոտ չգործածէ: Ինչ կը նշանակէ հայրնայնքն արգելիլ եւ զատակներու ներկայութեամբ ամենազոյճ լի ինքնակրօնականութեամբ ամուսնոյն գլխուն: Եւ իր արդի մը ներկայանայ, ուր, տղիկներուն չըջանալի մը մէջ, անոնք իր ծնողքէն ստովածներէն մէկ երկու նմոյշներ հրաժեշտ չըջանալը կազմող էրուն, խիստ յարգելի ծնողքը չուշանար սրտացուելն յայտնելու թէ տղաքը հիմայ գպրեցէն ինքիւր կը սորվին: Վա՛յ ձեզ որ ինքզինքնիդ ազատացնելու համար յանդաճիդ զրգարոյն վրայ կը բեռնէք եւ փոխադարձաբար: Որքան ծիծաղելի կրկնան մարդիկ երբ ուրիշներ խաբել ուզած ատենին ինքզինքնին ալ կը խաբեն:

Յայտնելով կը տեսնենք թէ այս պիտի միջավայրերուն մէջ սնող մանուկը ապագային ինչ գեր կրնայ խաղալ հասարակութեան մէջ:

ԽՍ.ՐՕ

ԿՈՎԿԱՍԻ ԴԵՊՔԵՐԸ

—o—

Պաթուժ 8 յունիս

Շոգենաւային գործակալութիւնները զարգեցողքին իրենց գործերը: Նոյնպէս զարգած են չոգենաւ բնակչութիւնը ու պարպելու եւ երկաթուղիի միջոցները գործողութիւնները:

Տիւրք 8 յունիս

Մէլիտոնայի մէջ ուսուցիչներու խաղալու օրձարանին տարիքին: Ուսուցիչներուն զօրութիւնը եւ իր օգնականը վերաւորուեցան եւ հակող ոտակուն մը սպաննուեցաւ:

Վաճառատները գոցուած են, լըրագիւրները չեն հրատարակուելու իրար անցումը ընդհանուր է:

Ամենայն Հայոց Միկրոյի Կաթողիկոսը հոս հասաւ: Խաղախներէ պաշտպանուած գնաց ներկայանալու փոխարքային:

Հալսու

ԿՐԵՏԷ

Կզգուոյն պաշտպան չորս պետութիւնները նոր յայտարարութիւն մը ուղղեցին ապստամբներուն զանոնք հրաւիրելով որ զէնքիկնք բրան:

«Նաեւ Յոսայէ Բրէնէ»-ի Պոլսոյ թըղթակիցը կիմանայ թէ Կրէտէի մէջ ապստամբական շարժումը կը ծաւալի: Միջազգային զինուորները հրաման ստացած են զգուշանալու ապստամբներու հետ ընդհարումէ: Այս պատճառաւ, ֆրանսական զօրախումբը որ վերջերս յարձակած էր Բլաթիայի մօտ ապստամբներուն վրայ զարգեցուցած է յառաջացումը զէպի Բերկօքսիօմբի:

Միւս կողմէ Կալիփի մէջ պահակ եզող անդլիական վաշոր պայմանագրութիւն մը ստորագրած է սպարտամբապետ Մանսուր հետ զատուին մէջ իրենց սահմանագիծեր որոշելով: Նպատակ չայ ապստամբ կրէտացիներու վրայ դրկուած զօրքերը իմանաւ եւ կանչելու:

Երեւանական վիճակը խիստ ծանրացած ըլլալով, կզգուոյն վարչութիւնը տաղնապի մատնուած է:

Իշխանին երկու խորհրդականները հրաժարած են, երրորդն ալ պիտի հրաժարի:

Եօրկի իշխանը իմացուց պաշտպան նապետութեանց թէ կզգրին վիճակը անհանգուստելի եղած է եւ թէ անհրաժեշտ է միջազգային պահակազօրքը աւելցնել:

Կրսուի թէ եթէ պետութիւնները մերժեն Կրէտէ նոր զօրք գրկել, իշխան Եօրկի իր հրաժարականը պիտի տայ:

ԱԶԳԱՅԻՆ

Վեհ. Կաթողիկոսը Աղէքսանդրաբոլ եւ ասկէ Տիփլիս գացած եւ փոխարքային ներկայացած է: Տեսակցութեան մանրամասնութիւնները կը պակսին:

—Իգլիբեանց կտակին համաձայն այս անգամ մրցանակներ տրուած են Ա. մրցանակը շահած են Թէոդիկ եւ Զիթեան, 35 ոսկի: Բ. մրցանակը՝ 30 ական ոսկի Գարամաճեան, Գարեկեան եւ Բարաղմեան: Ոյս առթիւ գընահատուած գործերն են Պոլսոյ հայկապարճ շուրջ 2500 էջ. Գաւառաւարդաբոլ, Հայերէնի լառաւարանը, որ հրատարակուի սկսած է պրակ պրակ:

—Տիփլիսէն Սոգոմոն Աղէքսանդրեան Բարասանեանց վերներս իր մահկանապոս կրնաքած ըլլալով, 9000 ոսկի արժող իր մէկ կալուածը կտակած է քաղաքին ժիմնադիտին, բերած հասոյթովը հայ տղաքներ ընդունելու պայմանաւ:

—Կեսարիոյ Ս.Արքայպետ վանքի բարձր վարժարանը այս տարի 9 չըջանաւարտ ունեցեր է:



Հ Ա Ն Դ Է Ս

Հոգաբարձութիւնս կը փութայ ծա-
նուցանել արգոյ ազգայնոց թէ քա-
ղաքիս ազգային վարժարանաց ամա-
վերջի հանդէսը տեղի պիտի ունե-
նայ վաղը, կիրակի, ժամը 2-ին
կէս օրէ վերջը, «Ստէտիսէնիէ» սրա-
հին մէջ:

Ի դիմաց հոգաբարձութեան
Վ. Աստենազպիր Աստենապետ
Մ. Սիմոնեան Փ. Հայրանեան
Յուլիս 2, 1905
Վառնա

Տ Ա Խ Ի Լ Ի Է

Շէհրիմիզ եռնագ վէ վէլօսի-
բէթիսթ շիրքէթլէրին տալէթի
իւզրէ, Պիւթիւն Պուկարիտա
պուլընան եռնագլար վէ վէ-
լօսիբէթիսթլէր յուլիս 8 տէ
վարնայա կէլուպ 3 կիւն գալա-
նագլար վէ օլուլար վէ եարըլլար
իճրա իտէճէքլէր: Պու միւնա-
սիպէթլէ շրմէնտըֆէրլէր 100
տէ 75 վէ վարօրլար 100 տէ 50
թէնզիլլէ պիլէթ վէրէճէքլէր
տիր: Մէմուրլարա սուլուհէթ
վէրմէք իշիւն՝ հիւքիւմէթ 7
կիւն վագանցա իտէրէք, յունիս
այլըղը 2 կիւն էվլէլ էօտէմիշ
տիր:

Ֆէխամ. Բրէնս Ֆէրտինանտ
հաղրէթլէրի տալի շէհրիմիզ
թէշրիֆ պուլուրաճաղընտան,
մէգարըլլար թարաֆընտա օլու-
նա թախսիս օլընան մահէլ-
տէ Ֆէխ. Բրէնսէ մախսուս պէ-
լէտիյէ պիր բալիլօն եարտը-
րաճագ տըր:

Ր Ո Ւ Ս Ի Ա

Բէթէրպուրկտա վէ ճիվարտա
իտարէի ասքէրիյէ իլան օլընտը:
— Թիֆլիստէ պիր պօմպա ա-
թըլարագ 2 մէմուր եարէլէնմիշ
վէ պիր բօլիս էօլմիւշ քլմաղլէ
իլթիլալ արթմըշ տըր:

— «Բնիալ Բօթէմքին» նամ
ասը զըրհլը իլէ պէրապէր պու-
լընան 267 նամէրօ թօրբիլէօր
Բէօստէնթէտէ թէսլիմ օլընմա-
յուպ Բուսիայա ավտէթ իթմիշ
իտի: Սէվաստաբօլ էօնիւնէ եհ-
թիշմէսինտէ տէրունիստէքի 16
թայֆէլէրի տէրտէսթ օլընարագ
«Բրիւլ» նամ նագլիյէ վարօ-
րընտա հապս իտիլտիքլէրի պիւ-
տիրիմիշ տիր:

Հօնտօն 29 յունիս

— Մօսկուայա եազըն իրինս-
քօէ նամ սէրայըն Ջարա մախ-
սուս օլան տաիրէնին ալթընտա
աչըլան պիր եօլ եօղլանըլմըշ վէ
խաֆի պիր օտաճըլտա 1000 քի-
լօ տինամիթ պուլընմըշ վէ պու-
իշտէն տօլայը իքի մուհէնտիզ
վէ պիր չօգ քէսան թուլթուլմըշ
օլտըղը Բէթէրպուրկտան Վիէն:

նայա պիւտիրիմիշ տիր: Իշպու-
գօմբլօ Ջարը եօլճըլըլտան մէնն
իթմէք էֆքեարը իլէ բօլիցիա-
տան թէրթիպ օլընմըշ զանն օ
լընմըր:

— Մօսկուա վալիսի Շուվա
րով 3 րէվօլէր տարպէսի իլէ
վուրուլուպ վէֆաթ իթմիշ տիր:

Մ Ո Ւ Հ Ա Ր Է Պ Ե

Սախալին ատասընըն ճարօն-
լըլարտա զապթ ու իշլալ օլըն
մասընը ժէնէրալ Լիւնէվիշ տախի
թաստիգ իթմիշ տիր: Մէքքիւր
ատատա բէք չօգ բօլիթիգա միւթ-
թէհիմլէրի սիւրկիւն պուլըն
տըզլարը կիպի, միլլէթտաշա-
րմըլտան Կուկուսեանըն տախի
արգատաշարը իլէ պէրապէր օ-
րատա պուլընտըղը մէմուրիմիզ
օլմուշ ըտը: Էկէր շիմտիյէ գա-
տար նագլը մահէլ իթտիրմէտի-
լէր իսէ մէրգուսանըն եազըն-
տա սէրպէստ պըրագըլմալարը
մէմուրիմիզ տիր:

— Ջին տէվլէթի բուս վէ ճա-
բօն հիւքիւմէթլէրինէ պիրէր
իլթարնամէ եօլլայուպ, միւսա-
լէհա միւզէքէրէսինտէ շին մէ-
մէմալիքինէ վէ հաքիմիլէթինէ
տալիւր մէվլուր պահս օլաճագ մէ-
սէլէլէրտէն տօլայը քէնտիսինէ
էվլէլճէ մալիւմաթ վէրիմէսինի
թալէպ իթմիշ վէ աքսի հալտէ
վէրիլէճէկ գարարլարը քէնտիսի
թանըմաճաղընը իլթար իթ-
միշ տիր:

— Քօրսաքովս իսքէլէսինտէ
Բուսլար ճարօն տօնանմասընա
գարըն հէր գուլվէթլէրինի սարֆ
իթտիքտէն սօնրա տիւշմանըն
զարպընա տայանմայուպ, հիւ-
քիւմէթ պինալարընը վէ տէրօ-
ղիլէրի եագարագ շիմալա գաշ-
մըլլար:

Կ Ի Ր Ի Տ

Համի տէվլէթլէր ըսեանա
գարըն թուլթաճագլարը թէտ-
պիր իւշիւն էլան պիր գաթի
գարար վէրմէտիլէր: Բուսիա
չէտիտ թէտպիրլէրլէ ըսեանը
պաստըրմագ էֆքեարընտա տըր:
Իթալիա ատայը իհաթէ իտուպ
ասըլարա թօգանմաճագ ֆիք-
րինտէ, ֆագաթ տիկէր իքի հա-
մի տէվլէթլէր էլան քէնտի
էֆքեարլարընը պէյան իթմէ-
տիլէր:

Եռնան հիւքիւմէթի ատանըն
թէսքինի քէնտիսինէ իհալէ
իտիլմէսինի թէքլիֆ իտէյօր:

Մ Ի Ի Թ Է Ն Է Վ Ի Է

Ֆրանսըզ սօսիալիսթ ըէյիսլէ-
րինտաէն Մ. Ժօնէս Ալմանիա
սօսիալիսթլէրինտէն տալէթ գա-
պուլ իտէրէք նութգ իրատ իթ-

մէք իշիւն Պէրլիմէ կիտէճէք ի-
տի: Ֆագաթ վիւքէլա ըէյիսի
Մ. Պիւլով նէգաքէթլի պիր
թարղլէ Ժօնէսի Ալմանիայա գա-
պուլ իտէմէյէճէկինի Ֆրանսըզ
հիւքիւմէթինէ պիրլտիրտի:

Մ. Ժօնէս իրատ իտէճէկի
նութգընըն խուլասէսինի պու-
տէֆա կաղէթալար վասիթասը
իլէ ալման էհալիսինէ պիրտիր-
տի:

— Ախրիէն նէշր օլընան մալիւ-
մաթա պինտէն, Պիւթիւն Բուսի-
ատա 9,156,090 իշճի վար ըմըշ
պուլարըն 6,335,030 էրքէկ վէ
2,821,060 գարը: Ֆագաթ պու-
լարտան ասըլ իշճի օլանլարը
7,042,959 քիշի օլուպ: գայան-
լարը խըվէթքեար վէ պէսլէ-
մէ տիրլէր:

ՍՕՆ ԹԵԼԵԿՐԱՖԻԱՐ

Բէթէրպուրկ 30 յունիս
Դօնթ Շուվալովըն գաշմըշ օ-
լան գաթիլի բէք տէհէթլի
բօլիթիգա ֆէսատճըր տըր: Անը
թուլթան հիւքիւմէթ պէօյիւք
պախշիշ վատ իթտի:

— Բէվալէթէ կէօրէ սուհ
միւզէքէրէսի իշիւն Մուրաֆիլին
եէրինէ Մ. Վիթթէ մուրախաս
նասպ օլընաճագ տըր: զիրա
Մուրաֆիլի խասթալանմըշ տըր:

— Պաշրիէ նալըրը Ալէլան
իսթիֆա իթտի: Ջար անըն
եէրինէ Պիրիլէվի նասպ իթտի:
Եէնի թէշքիլաթ էմիրլէրի տա-
խի վէրտի:

Պագու 30 յունիս
Էլմիաճին ճիվարընտա պու-
լընան քէօյլէրին էրմէնիլէ
րի գատընըն խանէսինի եագ-
տըլար վէ պուլընիլ իսլամլարը
հիտտէթլէնտիրտիլէր, տահա
զիյատէ չու սէպէպլէ հիտտէթ
զիյատէ օլտու քի քի թիֆ-
լիս: Պագու վէ երեւան էրմէ-
նիլէրի խուսուլէթի թաթիլ
իթմէք իշիւն ըէճալէ իքի թա
րաֆըն բուհանէլէրի վասիթասը
իլէ իսլամլարլէ մուգալէլէ իթ-
միշլէր իտի:

Հօնտօն 1 յունիս
Ճիպրալթարտա գօլէրա զու-
հուր իթմիշ օլմաղլէ, հիւքիւմէթ
թէտպիրլէր էլէ ալմըշ տըր:
Սթանպուլ 1 յունիս

Թիւրք մէհաֆիլինտէ զանն
օլընտըղը իւզրէ, Մաքթոնիանըն
հալը հալըրընը ինկիլիլ վէ Բուս
տէվլէթլէրի միւթալէսայա ալա-
րագ իսլահաթ իճրասընա գալ-
գըշաճագլար ըմըշ:

ԾԱԽՈՒ ԳԻՐԳԵՐ

ԹԻՒՊՈՒՐՏ Ա. հատր (162 էլ) 1 ֆր.
» » » [433 էլ] 2 ֆր.
ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆՉ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԳ անդամ տպագ-
րուած եւ ճօխացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկար-
նեու նիստ ու կացը ու թուրքերէ
կրած տառապանքը անոնց աղատու-
թէնէն առաջ. Գին 50 սանգիմ

ՀԱՅՐԵՆԻԿԻ ԶԱՅԵՐ Պատկեր
մը ճաճկահայաստանի իրական կեան-
քէն: Չիղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմի
ՎԱՌՆԱ «Ի Ր Ա Ի Ն Ք» ի խմբագ-
րութեան

ՍՕՖԻՍ Տ. Օննիկ Գարսիանի
ՊՈՒԿՐԷՇ Տ. Օննիկ Փափագեանի
եւ Տ. Յ. Պրպէնճեանի

ՔՕՆԱՍԻՆՆՆԱ Տ. Սիսակ Մէլիքեանի
ԳԱՀԻՐԷ Տ. Կարապետ Էրզնկայեանի
ԱՂԷՄԱՆԴՐԻՍ Տ. Ստեփան Մագ-
մանեանի

ՈՒՍՐ (Ամերիկա) Տ. Յակոբ Ֆրանկ-
եանի

ՊՕՍԹՈՆ Տ. Ա. Ասքանազի
ՓՐՕՎԻՏԷՆՍ Տ. Մ. Տէր Պօղոսեանի

ԹԻԻՃՃԱՐԻ ՅԷ

ՎԱՌՆԱ. Գին 3
ՉԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ
Վալիս 54-60 լիպ. 8.60 / 11. 40/2
Արապա 52-62 լիպ. 9. / 11 60

ԱՐԱՅ,
Վալիս 100 քիլօ Գին 11. / 11. 20
Արապալէնի 42-47 լիպ. 6. 4 / 6. 80

ԵՆՈՒԼԱՅ արապա 33/36 լիպ 5. 20/5. 70
Վալիս 100 քիլօ 9 40/10. 20

ՅԱՍՈՒԼԵԱ 100 քիլօ Եօգ
ՌԱԲԻՑԱ 100 » 19. 20/19. 60

Արապա 100 քիլօ 16-18
ՏՄՐ արապա 5էքթ. Եօգ
ՔՕԼՕՁ արապա 55-60 լիպ. 11./12.80

ՄԻՍԻՐ 57-58 լիպ. 6. 40/7. 60
» 100 քիլօ 11.20- 11. 90

ՉԱՎՏՈՐ արապա 7. 70/ 8.
» 100 քիլօ 10. 80 / 11. 20

Կիւնտէ 15-20 վալիս վէ 30-4
արապա կէլմէքտէ. վալիս մուլմէ-
ղէնարօլէօն 20 ֆր. արապա մու-
լմէլէօն նարօլէօն 20. 20

ՍԱՐԲԱՅԻՑԷ
նարօլէօն 20, 20 ֆրանք
Օսմ. լիբարը 22, 75 ալմուս ֆրանք

ՊԱԳԱԼԻՑԷ
Վարնա ընդատընտա պագալիլէ
մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալմուս
ֆրանք իլէ:

ԳԱՀՎԷ 1,95/2 10
ՇԷՔԷՐ նէմէք 75
ՇԷՔԷՐ քէմէլ սանտըգ 37. 75

ԲԻՐԻՆՉ Ֆիլիպէ չուվալը Եօգ
» ճարօն » 35.
» Ինկիլիլ » 28. 50

Բիգօէ » 49.
ԿԱՉ Սանտըգ 11. 60
ՉԷՅԹԻՆ Եաղը քիլօ 85.-1
ԳՈՒՐՈՒ Իւզրիւմ 25

ԹԱՏՐՈՆ ՊՕՐԻՍ

— օ —
Այս գիրքը «Վէսէլ» հայ գերօ. խմ-
բին կողմէ անգլիէ անգամ ըլլալով
պիտի ներկայացուի «Միթէ ՄԵՂԱՒՈՐ
ԵՄ» տրամագօմէսին, 3 արար:

Գիները— Ա. կարգ 1. 20 Բ. կարգ 1.
Գ. կարգ 50 սանգիմ: Տասը խաղի
տոմսակ միատեղ գնողին հարկերին
20 գեղէ:

Одговорникъ А. Курбетиянъ
печатница П. Глушковъ и С. де-Варма